



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Թեմա՝ Ապահով համացանց  
Առարկա՝ Ինֆորմատիկա  
Հեղինակ՝ Թագուհի Գալստյան  
Ղեկավար՝ մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան  
Մարզ՝ Լոռի  
Ուսումնական  
հաստատություն՝ ՀՀ Լոռու մարզի «Շահումյանի միջնակարգ դպրոց»  
ՊՈԱԿ

Վանաձոր 2022թ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	էջ 3-4
Գլուխ 1- 1.1 Ի՞նչ է «Ապահով համացանցը»	<a href="http://safe.am/book/Handbook_teachers_lesson_plans.pdf">http://safe.am/book/Handbook_teachers_lesson_plans.pdf</a>
	էջ 5-6
1.2 Ինչպե՞ս ապահով օգտվել «համացանցից»	էջ 6-11
1.3 «Համացանցի» դրական և բացասական կողմերը	էջ 11-12
Գլուխ 2- 2.1 «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»	
առարկայի առանձնահատկությունները	էջ 12
2.2 Գործնական աշխատանք <a href="https://media.am/literatus/">https://media.am/literatus/</a> Լիտերատուսի արկածները և մեդիագրագիտությունը «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»	
առարկայի դասավանդման ընթացքում	էջ 13-15
2.3 Երեխայի հեռախոսում ծնողի վերահսկողություն սահմանել	էջ 15-24
Եզրակացություն.	էջ 24-25
Օգտագործված գրականության ցանկ.	էջ 25

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք, 2021-2022 ուսումնական տարում և հաջորդիվ՝ 2022-2023 ուսումնական տարում Տավուշի մարզի բոլոր դպրոցների 2,5,7,10 դասարաններում փորձարկվում են հանրակրթության պետական նոր չափորոշիչները [[Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի ՆԱԽԱԳԻԾ /Թվային գրագիտություն և համակարգչային գիտություններ/ - ՀՀ ԿԳՄՄՆ \(escs.am\)](#)], որոնք ամփոփվելուց և լրամշակվելուց հետո նախատեսվում է 2023-2024 ուսումնական տարում ներդնել ՀՀ բոլոր դպրոցներում :

Ի տարբերություն մյուս բոլոր առարկաների, «Ինֆորմատիկա» առարկայի բովանդակությունը ենթարկվել է արմատական փոփոխության: Փոփոխվել են ոչ միայն թեմաները, այլ նաև առարկայի անվանումը, այն է՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն», որն արդեն իսկ ենթադրում է թեմաների դասավանդման նոր մոտեցումներ՝ նոր չափորոշչային պահանջներից բխող ժամանակակից տեխնոլոգիաների և թվային գործիքների կիրառմամբ, որոնց մեջ առանցքային դեր ունեն համացանցից անվտանգ օգտվելը, ինչից էլ բխում է **թեմայի արդիականությունը**: Ներկայիս տեխնոլոգիական հեղաշրջման հիմքում ընկած են ապահով համացանցը, վեբ անվտանգությունը, առցանց անվտանգությունը: Ապահով համացանցը գիտելիք է օգտվողների անձնական անվտանգության մաքսիմալացման, և անվտանգության ռիսկերը մասնավոր տեղեկատվության և սեփականության մասին՝ կապված համացանցի օգտագործման հետ, և ընդհանուր առմամբ ինքնապաշտպանությունը համակարգչային հանցագործություններից:

Համացանցից օգտվողների թիվը շարունակվում է աճել աշխարհով մեկ: Համացանցի անվտանգությունը առաջնային խնդիր է թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների համար, քանի որ զոհ կարող են դառնալ ոչ միայն երեխաները, նաև մեծահասակները: Ընդհանուր խնդիրները, որոնք կապված են ապահովությանը համացանցում ներառում են՝ չարամիտ օգտվողներ (սպամ, խայծ, կիբեր հարձակում, և այլն), վեբ-կայքեր և ծրագրային ապահովում (վտանգավոր ծրագրերը, համակարգչային վիրուսները), ինչպես նաև տարբեր տեսակի անհարգի և վիրավորական

բովանդակություններ: Մի քանի հանցագործությունները կարող են լինել կատարյալ համացանցում՝ հետապնդումը, անձանական տվյալների հավաքումը:

Շատ սոցիալական ցանցերի և գրուցարանների կայքերը ունեն էջ անվտանգության մասին: Շատ խմբեր, կառավարչություններ և կազմակերպություններ անհանգստություն են արտահայտում երեխաների անվտանգության մասին՝ համացանցը օգտագործելիս: Ամբողջ աշխարհում Ապահով համացանցի օրը նշում են փետրվարին՝ բարձրացնելու համացանցում անվտանգության իրազեկումը: Մեծ Բրիտանիայում անգլ.՝ Get Safe Online ընկերությունը հովանավորվել է Կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի պետական հաստատությունից անգլ.՝ (SOCA), ինչպես նաև խոշոր համացանցային ընկերությունների կողմից՝ Մայքրոսոֆթ և այլն:**Թեմայի նպատակը**, քանի որ համացանցից օգտվում են թե մեծահասակները, թե աշակերտները՝ կիրառելով նաև կրթության ոլորտում, անհնար է ինֆորմատիկայի և հետազայում նաև՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի ապահով դասավանդումը առանց համացանցից անվտանգ օգտվելու:

Սակայն ինչպես գիտենք, ժամանակակից աշխարհում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների գործիքներով աշխատելիս, կարող ենք ունենալ ինչպես դրական արդյունքներ, այնպես էլ որոշակի բարդություններ:

**Թեմայի խնդիրները** Թերևս ավելի կարևոր է, որ ուսուցիչներն օգնեն երիտասարդներին՝ դառնալու քննադատորեն մտածող և պատասխանատու քաղաքացիներ, ուսումնասիրել իրենց իրավունքներն ու պարտականությունները, սովորեցնել երիտասարդներին հետևելու իրենց և հասակակիցների առցանց վարքագծին: Ինչպես նաև կիրառանվտանգության կանոնների և մեդիագրագիտության ոչ լիարժեք տիրապետման հետ, որոնք առավել ակնառու են դառնում ուսումնական գործընթացում գործնական աշխատանքներ իրականացնելիս: Այսպիսով, հետազոտության թեման առավել պատկերավոր ներկայացնելու համար կդիտարկենք «Ինֆորմատիկա» առարկային հետազայում փոխարինող «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի տարրական դասարաններից ընտրված որևէ թեմա՝ վերլուծելով և ներկայացնելով ապահով համացանցի դերը դասավանդման ընթացքում:

## Գլուխ 1

### 1.1 Ի՞նչ է «Ապահով համացանցը»

Համացանցը հաղորդակցման մյուս միջոցներից տարբերվում է նրանով, որ այն ամենաապակենտրոնացվածն է: Բաղկացած լինելով անսահմանափակ քանակությամբ միմյանց միացված համակարգիչներից և հաղորդակցության ու տեղեկատվության փոխանակում թույլատրող տարբեր ուղիներից՝ այն չունի մեկ ընդհանուր վերահսկման կետ: Բացի այդ, վեբ 2.0 համակարգի շնորհիվ օնլայն ցանցերից օգտվողները սովորական դիտորդից վերածվում են տեղեկատվություն արտադրողի: Քանի որ մեր օրերում յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի ցանցում հրապարակել գրեթե ամեն ինչ, բազմաթիվ հարցեր են առաջանում՝ կապված համացանցի ապագայի և տեղեկատվության նման հոսքի վերահսկման հետ: Մենք հաճախ ենք ինքներս մեզ հարցնում՝ ինչպիսի՞ խոսքը կամ տեղեկատվությունն է վիրավորական կամ վտանգավոր մեր երեխաների, ընտանիքի և մեզ համար: Եվ որ առավել կարևոր է՝ ինչպե՞ս կարող ենք մեզ և մեր հարազատներին պաշտպանել դրանից:

Յուրաքանչյուր երկիր իր օրենսդրությամբ սահմանում է օրինական և անօրինական համարվող բոլոր գործողությունները: Հետևաբար, համացանցը որպես հաղորդակցման միջոց գործում է կանոնակարգված դաշտում: Համացանցից դուրս անօրինական համարվող ցանկացած գործողություն պետք է անօրինական համարվի նաև ցանցի ներսում: Անօրինական գործողությունն ավելի ընդարձակ կերպով կարող է նկարագրվել ցանկացած այնպիսի արարք, նյութ, տեղեկություն և այլն, որը նպատակ է հետապնդում վնաս պատճառել անհատին կամ կազմակերպությանը: Անօրինական բովանդակությունն ընդգրկում է երեխաների չարաշահում պատկերող նկարներ և վեբ կայքեր, անօրինական գործողություններ զրուցասենյակներում (օրինակ՝ մանկապղծություն, առցանց ատելություն, քսենոֆիոբիա արտացոլող հաղորդագրություններ, կայքեր) և այլն: Անօրինական վարքագծի այս և այլ կարգի դրսևորումների մասին նշված է Կիբերհանցագործությունների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայում (<http://www.coe.int/cybercrime>)՝ համացանցի և այլ համակարգչային ցանցերի միջոցով կատարվող հանցագործությունների վերաբերյալ

առաջին միջազգային պայմանագրում, ինչպես նաև Երեխաներին սեռական շահագործումից և սեռական չարաշահումից պաշտպանելու մասին կոնվենցիայում Convention on the Protection of Children against Sexual Exploitation and Sexual Abuse:

## 1.2 Ինչպե՞ս ապահով օգտվել «համացանցից»

Ինտերնետն արդեն վաղուց և հիմնավոր ձևով արմատներ է գցել մեր կյանքում, շատ օգտատերեր անգամ չեն պատկերացնում կյանքն առանց համակարգչի: Սակայն տեխնոլոգիաները տարեցտարի կատարելագործվում են: Հեռախոսային, համակարգչային խաղերով երեխաների՝ հատկապես դեռահասների տարվելը, պետք է սթափեցնող լինի յուրաքանչյուր ծնողի համար: Այն, որ երեխան բակում խաղալու փոխարեն տանն է՝ ծնողի աչքի առաջ, բայց համակարգչի մոտ, չի նշանակում, որ անվտանգ միջավայրում է՝ ասում են հոգեբանները: Նրանք շեշտում, որ հենց աչքի առաջ գտնվող և համակարգչից կախվածություն ունեցող երեխան հետագայում կարող է լուրջ խնդիրներ ունենալ:

«Երեխային համակարգչի առջև մենակ թողնելը նույնն է, թե նրան մութ անտառում մենակ թողնես: Ինչքան առաջանա, այնքան վտանգների կհանդիպի»: Ի՞նչն է պատճառը, որ երեխաները տարվում են խաղերով: Կապը սկսվում է դեռ փոքր հասակից, երբ երեխաներին կերակրելու կամ զբաղեցնելու համար ծնողները դիմում են հեռախոսի ու մուլտֆիլմերի օգնությանը: Երեխաներին այս տարիքից ենք տանում համակարգչային աշխարհ՝ ասում են հոգեբաններն ու այս հարցում նորից մեղադրում մեծերին՝ հեռախոսից կախվածությունը հաղթահարել չկարողանալու, երբեմն նաև դրան ընդհանրապես չընդդիմանալու մեջ:

«Երբեմն ծնողները պայքարում են, երբեմն էլ ասում են, որ ոչինչ երեխա է, թող խաղա: Դա ստացվում է, որ մենք ենք երեխային բերում այդ դաշտ»: Ինչը կարող է բազմաթիվ բացասական ազդեցություններ ունենալ երեխաների առողջության վրա: Դրանք են՝

1□ Այն բացասաբար է ազդում երեխայի նյարդային համակարգի վրա:

- 2  Ուշադրությունը դառնում է ցրված:
- 3  Տեսողությունը և լսողությունը բթանում են:
- 4  Իջնում է ճանաչողական գործընթացների արագությունը:
- 5  Այն բացասաբար է ազդում երեխայի երևակայության վրա:
- 6  Այն բացասաբար է ազդում երեխայի խոսքի ձևավորման վրա:
- 7  Այն բացասաբար է ազդում երեխայի ընդունակությունների և այլ հատկանիշների վրա:
- 8  Այն բացասաբար է ազդում երեխայի հոգեբանության վրա:
- 9  Ավելի դժվար են քնում:
- 10  Մղձավանջներ են տեսնում:
- 11  նպաստում է գիրանալուն:

SS մասնագետ Մամվել Մարտիրոսյանը փաստում է, որ կախվածության առաջին նշաները ի հայտ են գալիս այն բանից հետո, երբ ծնողները իրենց բազմազբաղությունը թողափելու համար երեխային զբաղեցնում են հեռախոսով: Այն հարցին, թե հեռախոսը ինչպե՞ս է ազդում մանկահասակ երեխայի վրա, մասնագետը փաստում է. Հեռախոսներով օգտվողների շրջանում ուռուցքներով հիվանդանալու հավանականությունը մեծանում է 70%-ով:



Այս ամենից խուսափելու և երեխային պաշտպանելու համար անհրաժեշտ է փնտրել երեխային զբաղեցնելու այնտրանքային միջոցներ: Երեխան կամ դեռահասը «Նա չունի հոգեբանական խնդիր, սակայն ընկերն առաջարկում է միանալ իրենց խաղին: Ու երեխան առանց հասկանալու հայտնվում է դրա մեջ: Սա նման է ատոմային ռումբի նման վնասակար բանի»: Սակայն առավել խոցելի են կոնֆլիկտային ընտանիքներում մեծացող երեխաները, որոնք իրենց հետաքրքրությունները փորձում են գտնել համակարգչի կամ հեռախոսի մեջ: Վտանգավոր իրավիճակներից խուսափելու համար հոգեբանի խորհուրդն է ապահովել երեխայի ամենժամյա զբաղվածությունը: Որքան շատ պարապմունքների հաճախի երեխան, այնքան ծնողի ու երեխայի շահերից է բխելու, ասում է հոգեբանները: «Երբեք պետք չէ խղճալ երեխաներին շատ ծանրաբեռնելու համար»: Տեղեկատվական անվտանգության հարցերով փորձագետ Սամվել Մարտիրոսյանը խորհուրդ է տալիս ծնողներին ուշադիր լինել երեխաների վարքագծային փոփոխությունների նկատմամբ: Կասկածների դեպքում ծնող-երեխա մտերմիկ ու ընկերական զրույցը չպետք է ուշանա:

«Խոսե՛ք ձեր երեխաների հետ, սակայն ոչ թե վախացնելով, այլ՝ որպես ընկեր: Եվ պետք չէ արգելել ինտերնետ մտնելը, քանի որ մեկա երեխան մտնելու է ու արգելելու դեպքում ավելի վտանգավոր է լինելու»:

- Կիսավեմ ձեր հետ նաև իմ փորձով՝
- 1□նախ զրույց եմ անցկացնում աշակերտների հետ:
  - 2□Բացատրում եմ թե ինչպես իրենք էլ կարող են հայտնվել այդ ծուղակում:
  - 3□Առաջարկում եմ հեռու մնալ նմանատիպ խաղերից:
  - 4□Բացատրում եմ ինչու:
  - 5□Բայց եթե այնուամենայնիվ հայտնվել են նման իրավիճակում խնդրում եմ ասել ծնեղներից որևէ մեկին ում ավելի շատ են վստահում:
  - 6□Հակառակ դեպքում եթե վախենում են ծնողի արձագանքից տեղեկացնել ինձ,ես խոստանում եմ իրենց ոչ մեկի չասել և փորձել լուծել խնդիրը:
  - 7□Ծնողական ժողովի ժամանակ ծնողներին ներկայացնում եմ թե ինչ վտանգների կարող են ենթարկվել իրենց երեխաները,բացատրում եմ ինչպես կարող են պաշտպանել



երեխաներին այդ վտանգներից, և հորդորում եմ երեխաների հետ ավելի հաճախ մտերմիկ զրույցներ վարել, որպեսզի երեխան վստահի և կիսվի իրենց հետ: 8 Առաջարկում են ծնողական հսկողություն սահմանել երեխայի հեռախոսում:

OgyMogy և այլ ծնողական վերահսկման հավելվածներ երեխաների առցանց գործունեության դիտորդ: Ծնողները կարող են դիտել երեխաների նենգ և սարսափելի գործողությունները, քանի դեռ ուշ չէ: OgyMogy-ն ձեր սիրելիների լավագույն պաշտպանն է: Ծնողները կարող են արգելափակել մեծահասակների համար նախատեսված բովանդակությունը, անցանկալի հավելվածները և կայքերը, սահմանել էկրանի ժամանակի սահմանափակումներ, ձայնագրել զանգեր, տեքստեր, սոցիալական լրատվամիջոցներ, GPS տեղադրություն, էկրանի ձայնագրում և կարող են ավելին: Ծնողները կարող են վերահսկել երեխաների թվային սարքերը, ինչպիսիք են android հեռախոսը, պլանշետը, Windows համակարգիչները և Mac-ները՝ ձեր մատների տակ գտնվող ծնողական հսկողության հավելվածով: OgyMogy- ն android- ի մոնիտորինգի լավագույն ծրագրերից մեկն է, և այն դարձել է ծնողական վերահսկողության ծրագրաշարի ապրանքային նշան: Դուք կարող եք այն պարզապես օգտագործել երեխաների և պատանիների բջջային հեռախոսների և պլանշետային սարքերի առցանց դաստիարակություն սահմանելու համար: Խաղերը, հատկապես վտանգավոր են դեռահասության տարիքում: Հոգեբանական խնդիրներ չունեցող դեռահասները նույնպես կարող են ակամա հայտնվել դրանց թակարդում: Վիրտուալ կյանքի օֆլայն ծուղակում կարող է հայտնվել յուրաքանչյուրը: Ինչպե՞ս պաշտպանել փոքրերին մեծ խաղերից, որ չդառնան մեր կյանք վերջերս մտած նոր տերմինի՝ կիբերբուլիմիա՝ կիբերհալածանքի՝ գոհ: Խաղի արդյո՞նք էր Քննչական կոմիտեի ադմկոտ բացահայտումը: Պարզվեց՝ անհետ կորած 15-ամյա անչափահաս տղային հայտնաբերել էին Կիևյան կամրջի տակ՝ ծառից պարանով կախված: Երեխայի վրա բռնության հետքեր չէին գտել: Մահվան վարկածներից մեկը օւլայն խաղերն են:

Քննչական կոմիտե - Վարույթն իրականացնող մարմնի կողմից նախաքննությամբ առաջ են քաշվել 15-ամյա պատանուն ինքնասպանության հասցնելու վերաբերյալ մի շարք վարկածներ, այդ թվում՝ համակարգչային խաղերով տարվելու և դրանց ազդեցության տակ ինքնասպանություն գործելու վարկածը:

Նախաքննության շահերից ելնելով՝ այս պահին այլ տվյալներ հրապարակման ենթակա չեն: 15-ամյա տղային գտնելու համար դիմել էին հատուկ մանկավարժ-հոգեբանների, նրանցից մեկն Արթուրն էր: Պատմում է՝ վերջերս ինքն էլ հասկացել, կանխել էր, որ օնլայն վտանգավոր խաղն իր աշակերտներից մեկի կյանքի հետ չխաղար: Այս անգամ ևս մեկ երեխայի կյանք փրկել չհասցրին: Արթուր Գևորգյան (հատուկ մանկավարժ և հոգեբան) - Քանի որ ես նաև շների հետ եմ աշխատում, փորձում էին շուն գտնել, որ կփնտրեր, կգտներ տղային, բայց մինչև էս-էն, արդեն առավոտը լուրը եկավ, որ արդեն մահացել է երեխան:

Մամվել Մարտիրոսյան (մեդիափորձագետ) - Մի դեպքում ասում են, որ ինչ-որ կուրատորներ հայտնվում են, երեխային ստիպում: Էս ամենն իրականում հիմնված է մարդկանց վախերի վրա: Տեսականորեն նման հաքերներ կան, բայց իրենք հաստատ երեխեքի հետևից չեն ընկնում, պետական պաշտոնյաների ու բիզնեսամենների հետևից են ընկնում:

Իրականում կիրքերհալածանքն ավելի լուրջ խնդիր է, քան խաղերը, ասում է Մամվել Մարտիրոսյանը, որովհետև, եթե խաղը չկա կամ այն ջնջում են, փոխարենը սոցցանցերում մնում են երեխայի վախերը շահարկող հեշթեգերը: Մամվել Մարտիրոսյան - Այդ խաղը ներբեռնվող էլ, չի ինչ-որ հեշթեգերի միջոցով շփվում են: Սոցիալական ցանցերում հեշթեգերի միջոցով շփում է, մի կողմից՝ ուռճացված թեմա է, մյուս կողմից՝ կան մարդիկ, որ իրենց շեղումներից ելնելով փորձում են օգտագործել: Ինքնասպանության դրդող անհայտ խելագարների մասին բոլոր երեխաները չէ, որ գուշակում են, նրանցից մեկին գտանք, պատմեց՝ ինչ-որ մի փուլում ստիպում են անել այն, ինչ իրենք են ուզում, ասենք՝ արթնանալ գիշերը Ժ. 4:20, ձեռքին նկարել կենդանի, հետո առաջադրանքի վերջին փուլում երեխային ստիպում են ձեռքին արդեն նկարել ածելիով: Առաջադրանքները կատարո՞ւմ ես, պարտավոր ես ապացուցել նկարներով, եթե ոչ, սպառնում են գրել հարազատներին ու ընկերներին: Բայց այս ամենն ասելու համար գոնե մեկը պիտի իմանա, որ երեխան ընկել է խաղի ծուղակը: Եվ եթե, միևնույն է, երեխան մտնում է ինտերնետ, մասնագետը խորհուրդ է տալիս չտալ անսահմանափակ հնարավորություններով հեռախոս, չմոռանալ միացնել **ծնողների օնլայն վերահսկողության հնարավորությունը**: Ծնողներն ու ուսուցիչներն էլ էին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ահազանգել՝ կյանքի համար

վտանգավոր խաղերը մեր երկրում էլի ակտիվացել են: Խորհուրդ տվեցին կանխարգելել, որ երեխաներն օնլայն կյանքում անվտանգ ապրեն: Իսկ անվտանգ ապրելու համար մասնագետներն ասում են՝ օնլայն կյանքի այլընտրանք միշտ կարելի է գտնել՝ անընդհատ «պարապը» լցնելով՝ առանց համացանցի: Ծնողներն ու ուսուցիչներն էլ էին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ահազանգել՝ կյանքի համար վտանգավոր խաղերը մեր երկրում էլի ակտիվացել են: Խորհուրդ տվեցին կանխարգելել, որ երեխաներն օնլայն կյանքում անվտանգ ապրեն: Իսկ անվտանգ ապրելու համար մասնագետներն ասում են՝ օնլայն կյանքի այլընտրանք միշտ կարելի է գտնել՝ անընդհատ «պարապը» լցնելով՝ առանց համացանցի: Պետք է նաև բացատրել, որ երեխաներ որսացող հաքեր-այլմոլորակայիններ պարզապես չկան:

### 1.3 «Համացանցի» դրական և բացասական կողմերը

#### **Առավելություններ**

«Համացանցը ունի մի շարք էական առավելություններ,բայց նաև հարուստ է բազմաթիվ վտանգներով:Այդ իսկ պատճառով հարկավոր է մեղիագրագիտություն: Համացանցի սերվերներում պահպանված հսկայածավալ ինֆորմացիան հասանելի է մեզ ամենուր:

#### **Թերություններ**

Համացանցը լի է բազմաթիվ վտանգներով,սկսած համակարգչային խաղերից,վերջացրած համացանցում տեղադրված բազմաթիվ նյութերից,որոնք հասանելի են բոլորին:

Բոլորին հայտնի է, որ անգամ անձնական համակարգչում տվյալների պահպանման դեպքում ոչ ոք չի կարող երաշխավորել դրանց անվտանգությունը: Ո՛չ firewall–ի առկայությունը, ո՛չ տեղադրված հակավիրուսային ծրագիրը 100%–ով չեն երաշխավորում տվյալների պահպանումը:

## Գլուխ 2

### 2.1 «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի առանձնահատկությունները

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի 2-12րդ դասարանների չափորոշիչները կառուցված են ըստ դպրոցական մակարդակների: 2-4 դասարաններ՝ տարրական դպրոց, 5-9 դասարաններ՝ միջին դպրոց և 10-12 դասարաններ՝ ավագ դպրոց: Դպրոցական յուրաքանչյուր մակարդակում չափորոշիչները խմբավորված են չորս հիմնական գիտակարգային գաղափարային ուղղություններով՝ Հաշվողականությունն

(Computing) ու հասարակությունը, Թվային գործիքներն ու համագործակցությունը, Հաշվողական համակարգերն ու Հաշվարկային (Computational) նալգորիթմիկ մտածողություն: Յուրաքանչյուր ուղղությունը այնուհետև բաժանվում է թեմաների, որոնք բաղկացած են համապատասխան չափորոշիչներից: Առարկայի ուսումնառության գործողությունները ինտեգրված են չափորոշիչների ողջ երկայնքով

և օգնում են սահմանել աշխատանքի կատարմանն կատարման կալիքները, որոնք հստակ են ցուցում են, թե ինչպե՞տք է իմանան կարողանան անել աշակերտները:

Ուստի, որպեսզի առավել պատկերավոր ներկայացնենք հետազոտվող թեմայի էությունը, ներկայացնենք գործնական աշխատանքի օրինակ՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայից:

## 202 Գործնական աշխատանք

<https://media.am/literatus/> խաղի միջոցով փորձել աշակերտներին հետազոտություն իրականացնել, և պարզել ինֆորմացիայի սխալ կամ ճիշտ լինելը: Վերջում քննարկել կարծիքները և գալ վերջնական եզրակացության:

Աղյուսակ 1

Թեմա4	Դասարան7
4,4	ԿողՆՄԳ4 ԹԳԾ ՕՊՏ 1
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունքՅրդ մակարդակ</b>	
Մտազրոհի միջոցով գտնել ուղիներ պարզելու ինֆորմացիայի ճշմարիտ կամ կեղծ լինելը: Տեխնոլոգիական պրոդուկտների հասանելիությունը և ճշմարտացիությունը բարելավելու համար:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օգտագործել համացանցից վերցրած ինֆորմացիան</li> <li>- Նկարագրել թե ինչ հիմքեր ունի ասելու, ինֆորմացիայի կեղծ է, թե իրական:</li> <li>- Օգտագործել սոց ցանցում տարածված որևէ նյութ, գրել և ուղարկել հաղորդագրություններ, հավաքել, կարդալ և վերլուծել արդյունքները:</li> </ul>	
<b>Բովանդակություն</b>	
<p>Սկսում ենք էլեկտրոնային փոստի հետ աշխատանքը</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուղարկում և ստանում ենք հաղորդագրություններ</li> <li>• Կցում ենք, ուղարկում և ստանում ենք ֆայլեր</li> <li>• Պատասխանում ենք նամակներին</li> </ul> <p>Կիսվում ենք մեր աշխատանքով և մտքերով ու սուցիչների, ծնողների, և ընկերների հետ</p>	

<ul style="list-style-type: none"> <li>• Երբևիչունենք օգտագործում էլեկտրոնայինփոստ նկարճհաղորդագրություններիծրագրեր,վերջում կատարում եզրակացություն:</li> </ul>	
<p align="center"><b>Պրակտիկաներ</b></p> <p align="center"><b>Գործնականաշխատանքներ</b></p>	<p align="center"><b>Ընդհանրական</b></p> <p align="center"><b>Խաչվողգաղափարներ</b></p>
<p>Կառուցել բացատրություններ նմշակել լուծումներ :Ստանալ, գնահատել ևհաղորդել տեղեկատվություն:</p>	<p>Մասշտաբ,քանակ: ԱնհատնՀարաբերություններ</p>
<p align="center"><b>ՀՊԶԿարողունակություններ</b></p> <p align="center">Կ13Կ14</p>	<p align="center"><b>ՀՊԶՎերջնարդյունքներ</b></p> <p align="center">S9</p>
<p align="center"><b>Միջառարկայական կապեր</b></p>	

Ինչպես երեխայի հեռախոսում ծնողական վերահսկելություն սահմանել:

Ներկայացնենք հաջորդական քայլերը`


- 1  Եթե ձեր երեխան արդեն ունի ակաունտ Google-ում,դուք կարող եք անջատել և միացնել ծնողական վերահսկողություն Family Link-ի օգնությամբ:
- 2  Եթե երեխայի 13 տարեկանը լրացած չէ (տարիքային սահմանափակումը կարող է լինել տարբեր կախված երկրից) և նա չունի սեփական Google ակաունտ,դուք կարող եք ստեղծել նրա համար ակաունտ և ղեկավարել Family Link-ի օգնությամբ:
- 3  Եթե դուքծնողական վերահսկելություն ստեղծել եք գոյություն ունեցող ակաունտում և եթե երեխան բավական մեծ է,որպեսզի ղեկավարի իր ակաունտը ինքնուրույն,ապա կամ ինքը կամ դուք կարող եք ինքնուրույն անջատել ծնողական վերահսկելությունը:

- 4□ Ծնողական վերահսկողություն սահմանելու համար պետք է ունենալ Google-կառնուտ(եթե ոչ ապա ստեղծել)
- 5□ Ինչպես ստեղծել ծնողական վերահսկողություն՝ անցնել


Քայլ 1



Քայլ 2




Քայլ 3




Քայլ 4







Քալ 5




Քայլ 6




Քայլ 7




Քայլ 8




Քայլ 9




Քայլ 10



Քայլ 11



Քայլ 12



Քայլ 13







Figure 14



Քայլ 15



Քայլ 16



Անցնել

<https://support.google.com/pixelphone/answer/9055704?hl=ru#zippy=%2C%D0%BD%D0%B0-%D1%83%D1%81%D1%82%D1%80%D0%BE%D0%B9%D1%81%D1%82%D0%B2%D0%B5-android-%D1%80%D0%B5%D0%B1%D0%B5%D0%BD%D0%BA%D0%B0> հղումով և

տեսանյութը նայելով կատարել հետևյալ քայլերը:



## Եզրակացություն

Վերլուծելով Հին և նոր չափորոշչափին պահանջները և այդ համատեքստում ուսումնասիրելով ապահով համացանցը Ինֆորմատիկայի, կամ Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն դասավանդման ընթացքում կարող ենք ասել , ապահով համացանցի կիրառությունը և մեդիագրագիտությունը որպես ժամանակակից և արդյունավետ մեթոդ ոչ միայն արդիական է կոնկրետ դասավանդման պրոցեսում, այլ ցանկացած ոլորտում:Ապահով համացանցից օգտվելը և մեդիագրագիտությունը՝

1. Աշակերտների մոտ ձևավորվում է վերլուծելու, քննադատական մտածողություն ձեռք բերելու, հաղորդակցվելու և համագործակցելու հմտություններ և կարողություններ:
2. Քանի որ առավել մեծ ուշադրություն է դարձված արդիական թեմաներին՝ ինչպիսիք են կիրառական գիտություն, մեդիագրագիտություն, անձնական տվյալների և հեղինակային իրավունքների պաշտպանություն, և իհարկե ծրագրավորում, ապա այս ժամանակահատվածում «Ապահով համացանցը»անհրաժեշտ է լիարժեք վերջնարդյունք ունենալու համար:
3. Աշակերտները ներգրավվում են «Մեդիագրագիտության» վերլուծությա և մշակման մեջ, կիրառում են սովորած մեթոդները՝ խնդիրները ստեղծագործաբար լուծելու համար:
4. Կիրառում են քննադատական մտածողության և վերլուծական հմտությունները , տեղեկատվությունը, տեղեկատվական աղբյուրները, իրենց և այլոց ստեղծած աշխատանքները ուսումնասիրելու, գնահատելու և վերլուծելու համար:
5. Եվ ի վերջո աշակերտները սովորում են հետազոտել: Աշակերտները կիրառում են նորարարական տեխնոլոգիաներ՝ թվային գործիքներ, տեղեկատվությունը ճիշտ կերպով հավաքագրելու, գնահատելու և օգտագործելու համար:

## Գրականության ցանկ

1. Ապահով համացանց:<https://jeraff.ru/hy/oblachnye-tehnologii-i-internet-servisy-osnovnye-ponyatiya-i/>
2. Թվային գրազիտություն և համակարգչային գիտություններ/ նախագիծ (<http://www.coe.int/cybercrime>)` ,
3. «Ինչպես երեխայի հեռախոսում ծնողական վերահսկելություն սահմանել: <https://support.google.com/pixelphone/answer/9055704?hl=ru#zippy=%2C%D0%BD%D0%B0-%D1%83%D1%81%D1%82%D1%80%D0%BE%D0%B9%D1%81%D1%82%D0%B2%D0%B5-android-%D1%80%D0%B5%D0%B1%D0%B5%D0%BD%D0%BA%D0%B0> էջ 1-4
4. Ինֆորմատիկա 6-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2020 <https://online.fliphtml5.com/fumf/yilq/> , էջ 88-95